

բեալի թղթերի մէջ անմիտ անզամ՝ կրկնուում է՝ չամաքաքաղաք կարելի էր եզրակացնել, թէ Մատու. Ժ. 20 հ. ից յետոյ այլեւա չի յիշուում:— Պէտք է կարծել ուրեմն, որ նեղինակը տեղ տեղ իր աշխատութիւնը չէ լրացրել: Խակ այնպէս շատ յիշուող բառեր, ինչպէս Աստուած, Տէր, Յիսուս, Քրիստոս միասին դնելը՝ շատ դժուարացնում է քաց անողի գործը: Գործածութեան համար գուցէ ամելի նպատակայարմար մնէր նաեւ չին եւ Նոր կտակարաններն առանձին հատորներով կազմվը: Առ հասարակ այսպիսի մեծ աշխատութեան մէջ թերութիւններ հարկաւ պակաս չեն լինի, բայց դոցանով նորայ յարգը չի ընկնում: Երանի նա այնքան շատ տարածուէր, որ մօտիկ ապագայում՝ յաճախակի գործածութեան մէջ նկատուած թերութիւններից զերծ մի երկրորդ տպագրութիւն լցու ընծայելու հարկէ լինի:

## ԱՐ

ԸՆՈՒՃԱՉԱՐԴ ՏԷՐ ՅՈՎՃԱՆՆԵՍ

ԽԱՇԱԿԻԲ Ա.Ի.Ա.Գ. ՔԱՀԱՆՈՅ ԽԱՇԱԿԻԵԱՆ

Ի ԿԱՇԱԿԻԲ

ՈՐ ՅԻՆԱԿԵԱՎԸ ԵՍ Առ ՆՈՒԺԻՐԱԿԱՆ ԳԵ-  
ՄՈՎՆ ԳԱՆԳԵՍԻ, զոր Հնգիկն աստուածա-  
ցուցեալ է, գիտես արդեօք, թէ ուստի և ուր  
հասեալ կաս: և լիշնս զու Հարանցդ զի՞ն  
ընակամուունդ Հայրենին, ուր գրախափն սուրբ  
Դեման Երասի անցանէ եւ ոյր գրացի էր չին  
ջուղայի քաղաքն բարեշշն, բարգաւաճեալ ին  
ժողովրդովք և որդիքն իւր ուռածացեալ էին  
գրախափ կենդանաբար Գետովն:

Եւ զու երբ կարդաս զՊատմագիբն Առա-  
քէլ միթէ ցամաքեալ են ի ծերութեան քում  
արտասուք յաջացգ, որ չտղաս և կամ ոչ  
լսո ի վերայ տարագրեալ ամրախտ որդուցն  
և գաղթականութեանն, որոյ ծայրն եհաս  
մինչ յայդ աշխարհ Հնդկաց:

Եւ գուք լիշնը քան զամէն առաւել

զնուիրական զայն բանալին Մայր Եկեղեցւոյն  
ջուղայի, որ մինչ երթացին և լային ժողո-  
վուրդ, կացին առաջի գրան Ա. Աստուածած-  
նի Եկեղեցւոյն, և քանի սրատուուչ էր այն  
վերջին ողբերգութեան ձայն և մնաս բա-  
րեաւն, զոր գոչեցին Քահանայք և որդիք  
Եկեղեցւոյն:

Ո՞վ Առուր կոյս Տիրամայր, քեզ յանձ-  
նեմք զբանալին գրան արքայութեան Մայր  
Եկեղեցւոյն մերոյ, զոր թողումք արդ գունդակ  
ամայի, անքահանայ և անժողովուրդ: թո-  
ղումք զաւազանն որ ծնաւ զմեզ: տարաբազդ  
որդիքս տարագրիմք յօտարութիւն:

Եղուկ այն աւուր, զի զայս ասացին և  
ձգեցին զբանալին ի ծոցն Երասիսայ: Արդ  
կայ և մնայ բանալին այն ի խորս գետոյն,  
եւ ո՞ կարէ հանել զայն:

Այլ գու մի լինիր յուսահատ, բանալին  
այն՝ Սրբազն աւանդ է, գետք և ծովք աշ-  
խարհն չկարեն պահել թագուցանել զայն:  
Քանդի պահապան Հրեշտակ հսկէ ի վերայ  
նորա աւանդապահ կոյսն, որ բարեխօս լինի  
առ Արդին վասն վարանդի որդւոց Ախօնի:  
Ճեռն այցելութեան ի վերուստ ձգեալ ի վեր  
հանէ զբանալին որպէս զօվլնան ի փորոց  
կիտին:

Թողումք զբանալին: զի՞նչ արարին ար-  
գեօք քո գաղթական նախնիք զայնքափ հը-  
նագոյն Աստուածաշունչ գրչագիր մատեանս,  
անշուշտ բարձեալ տարան ընդ իւրեանս: զի  
կրօնի և Աստուածպաշառութեան գանձք էին  
նորա: որպէս Խորայելեան բնանակն, ուր եր-  
թայր զհետ իւր տանէին Քահանայք զՏա-  
պահակն հնոյ ուխտին:

Ասա գու ինձ այժմիկ, մի պահեր, ո՞վ  
Հայր եւ Քահանայ Տեառն, ի պատուական  
գանձուց անտի գոնէ մի հատ քեզ ժառան-  
գութիւն ոչ մնաց ի նախնի Հարց և ի Պա-  
պոյ քումմէ, զոր իրրե զակն գոհար ան-  
գիւտ և անգին ի քեզ պահես: և գուցէ  
կնքեալ զայն ոչ բանաս, ոչ ընթեռնուս, ոչ  
երգես, ոչ օրչես ուխտ եղեալ ընդ անձին  
քում: որպէս Խորայելեան գերեվարեալ որ-  
դիքն առ Գետապին բարիլոնի:

Եւ զու եւս արգեօք զկտակարանն Ա.  
առեալ երթաս յեղրա Գանգէսի, կախես զայն  
յուռենեաց և զու նստիս առ Հովանեօք:  
թէ ասեն քեզ որդիքն Հնդկաց, օ՞ն Արշնե-  
ցէք մեզ յօրհնութենէն Ախօնի: և զու առ-  
սես: ոչ երգեմ ես զօրհնութիւն յերկիր  
օտար՝ մինչեւ դարձուցէ զիս Տէր Աստուած

ի Սիօն Հայոց անդ և անդ միայն առ ռուենովք Երասխայ նստեալ օրհնեցից զՏէր յամենայն ժամենայն ժամ

Ոչ այգպէս, Հայր, Նորոյ Սիօնի Քահանայ, գու մի անձնկանար մտօք, որպէս Խարայէլն այն որ կարծէր, թէ միայն յԵրուսաղէմ պարտ իցէ երկիրպագանել Տեառն, կամ օրհնել և նուագել զԵհովայն, անդ ի Սիօն, անդ ի Սիօն և ոչ յայլ ուրեք: Ա.Ա գու ընդպարձակեա զմիտս քո Աւետարանի անսահման աղաստութեամբ: գու գիտես և ես յուշ առնեմ քեզ զբան Յիսուսին առ երջանիկ կինն Սամարացի: Ոչ միայն ի լեառն Քարեղին կամ յԵրուսաղէմ պարտ իցէ երկիրպագանել, այլ յամենայն տեղիս ուր Աւետարանին բարբառն հնէք, արժան է երկիրպագանել, Հօր հոգւով և ճշմարտութեամբ:

Ա.Ա թողումք աստ զանցելոց յիշատակ արտասուաց, որ տայ քեզ եւ ինձ ողբալ ի վերայ բեկման ժողովրդեան մերայ, որպէս Երեմիան այն ի վերայ Երուսաղէմի. զի որպէս կամեցաւ Տէր, այնպէս արարտ օրհնեալ է անուպաս օղորմութիւն իւր, որ չարար ըզմեզ ճուպքազ, այլ եթու զաւակս իրբե օրհնութեան ճիռս Հայաստանեայց Գրիստոնէւական Եկեղեցւոյ, որոյ ուռք Հաստատեալ եւ պատուաստեալ են յՈրթ ճշմարիտ շնորհիւ Թագէոսի և Գրիգորի Աւարելական մշակութեան:

Եւ գու ի ճուոց և յուոց անտի ես Հայր, որ ի Հնդիկս տարածեալ ի մայրենի բարունակէն Այրարատայ Եկեղեցւոյն և գու Հոգեպէս տաճար կամեցեալ ընդ որդիսն քոյ, զորս ճնեալ ես աւաղանաւն մլրութեան, երկիրպագանէք Հօր հոգւով և ճշմարտութեամբ:

Եւ զգիտեմ, գու խելամուտ արտ զիս, Հայր քաջաշմուտ, զի՞նչ է անուն այն շնորհաց Մատենին, որ այսպէս ուսուցանէ մեզ: Միթէ զգիտեն գու, այդ մատեն՝ շնորհաց Մատենն է, նորոյ ուխտին կտակարանն է, ոչ Մոլսիսին Գիրք, այլ Յիսուսին Աւետարանն է, որ ել ի Սիօնի կենանքն փրկութեան եւ աղատութեան աւետիս հնդիւաց յամենայն ծագը աշխարհի: Աւետարան ի Հօրէ Լուսոյ Յիսուսի Ճեռամբ տուեալ առ մարդիկ յաւիտենական կենաց բանն է, առ որ ասաց Պետրոս, Տէր, առ ով երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս:

Եւ ուր երթայր Գալլեացի ձկնորսն Պետրոս եւ գտանէր զյաւիտենական բանն, մինչ եկն բանն և եկտ զՊետրոս: Եւ ոչ որ ի մարդկանէ ունէր և կամ խօսեցաւ զյա-

լիտենական բանէն: Պղատո՞ն, Սոկրատ, Կոմըւս՝ օրէնսդիրն ձենաց, կամ Աշտա՞ք Հընդկաց: Ոչ, որքա յերկրէ էին և յերկրէ աստիխօսէին որպէս ասաց Յիսուս, և ինքն յերկնից դայր և յերկնից անտի խօսէր և առնէր, որպէս պատուիրեաց նմա Հայրն:

Եւ գու, Սիրելի Հայր, որ ի մանկութենէ անտի գԴիրս Սուրբս գիտես որպէս աշակերտն այն Պօղոսի Տիմոթէոս որ վարժեալդէ ես Աստուածաշունչ Գրովք: իմաստութեամբ հօգալով զյաւիտենական բանէն բուռն հարկանես, զանմահութիւն գրկել կամիս: Աւստի ի ձեռս առեալ զՊաղմուարանն Դաւթի, կարդաս առ Տէր: Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործութութեանն Բայց կարգա նուեւ զմեծին Պօղոսի բանավձիռն: Ապա մնաց մարդունից մեռանալու:

Եւ գու յայնժամ Հնարամիտ իմաստութեամբ ասացեր ինքնին: գիտեմ, թէ զինչ արարից, որ մեծագործ և փառաւորը մինիցի անուն իմ ի մէջ Հնդկաց աշխարհին: Ի վերայ նուիրական գետոյն Գանգէսի շնորհից զկամուրջ մի յոր անցուդարձ արացեն մարդիկի, եւ ողորմիս տայցեն շինողին: Ա.Ա ի միտը քո եկեալ ասացեր. զի փոյթ ինձ զայդպիսի մեծագործութեամբն որ արքայական իշխանութեանց և հարստութեանց պատկանի, և միթէ յիմար իցես: որ զհիմն ի վերայ լուծական ջրոց գնիցեմ: Զի՞նչ առնիցեմ, եթէ զայրանայ Գանգէս: քանդէս տանի զկամուրջն: ոչի, յիշատակն իմ երթայ կորնչի ի ծոցն Ովկիանու:

Կս Քահանայ եւ Պաշտօնեայ եմ Տեառն ինձ և ժողովրդեան՝ Եկեղեցի պիտոյ է: ուստի լաւագոյն եւս համարիմ շնել զմի Հրաշակերտ տաճար և ի վերայ գրանդուոյ ուկեգրովք քանդակի պլիշատակին իմ: Եւ միթէ ընտրող Ագիդ: Հաւանեցան ընդ այդ: ոչ այլ գարձեալ վարանամիտ եղեր եւ երկուացար, նախատեսելով թէ մարդիկ եւ ժանիք ժամանակին գիտեն զնիւթական և զարգալիքուն շնորհածն ծախսել և վլատակել թէ և Տաճար Տեառն իցէ: Գիտեմ: յուշ Եկին նաեւ քեզ հնայն Զուգոյի բարձրաշեն տաճարք, և Ախուրեանի ափանց հազար և մի եկեղեցեաց աւերակք:

Թողեր գու զայռոսիկ և զայլ իմն զհառաբակց յիշատակ խօրհեցար եւ ասացեր: թէ բաւ և շատ է ինձ, կուակաւ թողում ես այժմէն: զի երբ մեռանիմ յիշատակ կանգնեցեն ի վերայ շինողիս զմի յաւելքամեական կոժող ի մարմարին քարանց գեղարուես-

տիւ քանդակեալ: Եւ ես յորժամ տեսանեմ թէ մեռանիմ յայնժամ՝ գրեցից իմով ձեռամբ զարձանագիր տապանիս:

Ոչ Հայր, դու մի գրեր, թող ինձ որ ես գրեմ և աւանդեմ քեզ: Իսկ զի՞ւուականն թող Աստուած գրէ: որ իշխան է մահու և կենաց:

ԵՅՐԱՄԱՍ ՔՐԱՓԵՆ ՔԸՆՑԵԱԼ,

ՓՊՈՒ ՀԱՅՑԱՑ ՏՈՒՆԿԱՑ Ի ՀԱԴԿԱՑ ԱՇԽԱԲԴ,  
ԸԱԲՈՒՏԻՂ ԳԱՎԱՑԱԿԱՆ ՀԱՅՑԱՑ  
ԵՆՇՔԱՑԵԱԼ ՀԱՅՑԻ ԶԼՈՒՑԱՑԻ,  
ՅԱՎԱԾԵՆԻՄ ԳՎԱՀԵՆԱՑ ԽԱԾԿԻԿԵԱՆ,  
ԽԱԾԿԻԿԻ ԸՆԴ ՈՐԴԻՈՑ Ի ՆԵՐԳԻԵՑՈՒԹԵԱՆՆ.  
ԱԼԵՇՊԵԿԱԿԱՆ ԼՍ ԱԱՌԵՔ ԾԵՐՈՒԹԵԱՆՆ,  
ՈՐՊԻՍԵՈՔ Ի ՀԱՎՑՏԻ ՍՊԻՏԱԿ ՇՈՒՇԱՆ.  
ԱՆՔԱՑԿԱՆ ՅԷՆՑԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԻՒՐ ՀԱՐՑ.

ԱՄՓՈՓԻ ԱՍՏ ԸՆԴ ՀՈՊՈՎ, ՕՏԱՐ.

ՈՉ. ՀԱՅՑՈՑ ԱՇԽԱԲԴԻՆ ԶԱՒՏԱԿ.

Հաւանեցար, Հայր, գիտեմ զի ընդ այս եւս ոչ հանդեցաւ անձն քո: զի ասես դու թէ գիրն մամնապատ եղծանի եւ թէ մնայ եւս, ով ընթեռնու զայն: ոչ, միթէ մնայ Հայն ի Հայ ի Հնդկաց աշխարհ, որ կարդայ զիմ Տապանագիր և ողորմիս տայ:

Հայր, թուի ինձ աստ թէ դու յիշեցեր նահեւ զամայցեալ գերեզմանատուն Հնայն Զուզայի, յօրս հանդչին ոսկերք քոյ նախնի Հարց: Այս, յուշ եկին քեզ այն մեծամեծ խաչաքարինք, վայելզապէս քանդակեալ Տէրունական նշանաւ: Աւաղ, կոտորեալ փշրեցան նորա եւ այժմ վշշանք նոցին ընդ Հողով աւերակաց թաղեալ կան: Ծնջեցան յիշատակարանք և ով կարդայ զանուանս նոցա: Ոչ խունկ, ոչ կրակ, ոչ բուրքառ և ոչ Քահանայ գոյ, որ օրհնէ զգերեզմանս մեր հարց մեռելոց:

Ցիշեա, ով Հայր, դու մի մոռանար, այտի ի Հնդկաց աշխարհէն ասա չերմեռանդութեամբ ՀԱԳ-Ա-Հ հանդուցելոց: և հաւատա թէ Տովրիթին հրեշտակն Հռափայել: տանի հանէ զըս աղօթս առաջի աթոռույն Աստուծոյ:

Այսպէս դու անցեր զայնգիրէ, զի գիտացեր թէ ընդունայն է հոգալ զեղծանելի իրաց: ուստի որպէս զՄարիամն այն կենաց բանին սիրահար, զմասն բարի ընտրեցիր զյաւիտենական բանին յիշատակ: եթէ գնաս դու ի գերեզման նա լքանի ի քէն, և ընդ հոգւոյդ անմահ մնայ: զի քո յիշատակ Աստուծոյ բանն է:

Վասն այսորիկ դու կամեցար զանմահ Հոգւոյն՝ անմահ յիշատակ թողու յաշխարհի: ոչ ժամանգութեան որդիս, ոչ հարսաւութեան

զանիրաւ մամնայն, եւ ոչ զաշխարհիս ինչ որ ունայնութեանց՝ ունայն ստացուածք են, որ ընդ մահկանացու մարդոյն՝ թաղին ի գերեզման աշխարհիս: Եւ դու իբրև իմաստուն վաճառական զանարգ մամնայն ետուր և գնեցեր զՄարգարիտն արքայութեան, զԱւտարան և զբանն Աստուծոյ և գիտես դու թէ բան Տեառն յաւիտեան մնայ:

Ուստի դու ի Հնդկաց աշխարհէն իմանալով թէ յերուսաղէմ ի լեառն Սիօն, ի հոգեւոր վաճառաստան Արքոյն Յակովիթեանց, կայպատուական մարգարիտ մի, այն է Համարաբառ. Սուրբ Գրոց Հին և Նոր Կատակարանի, որ մնայր ի մթան տքնող Նրկասիրին մեծավատակ աշխատութիւն: Դու զայն ի լրյո հանել նախաձեռն Եկեղեց հանդիսացար ի ձեռուն անուանակից մտերմին քոյոյ Տէր Յով. Հաննէս Խաչակիր Քահանալիին Մկրեան, որ զուգակիր է քեզ հոգւով, որտիւ եւ գրասէր աշխատութեամբ: Տացէ աէր Աստուծածքեզ եւ նմա վարձս ըստ վաստակոց ձերոց, որ տքնիք հանապազ զկենաց բանին հաց պատրաստել Եկեղեցւոյ քաղցեալ մանկանց: Յաւ է ինձ, Հայր, որպէս և քեզ, զի որդիք Եկեղեցւոյ ի վերջին դարուս կարի սովեալ են ի ճաշակմանէ աստուծապիին Սուրբ Գրոց: Եւ միթէ որպէս առ Խարայէլ և առ մեզ կատարի բան Մարգարէին: «Տաց ձեզ ոչ զով հացի», այլ լսելոյ զբան Տեառն:

Էթ ժամանակ մինչ ոչ գոյր հրաշալի արպագրութեան արուեստ, առաւել գտանէին առ նախնի ժողովուրդս Հայոց Աստուծաշունչ ձեռագիր մատեանք, տաֆաննելի աշխատութեամբ վաստակեալ և պատրաստեալ ի վանական կրօնաւոր յեղարց մերոց, որովք լի էին վանորայք մեր: մէն մի վանք ընդարձակ աշխատանց էր գրական գործոց, թուղթըս մագալաթեայս շինել գունագեղ մելանս պատրաստել, բիւրազգի ծաղկէնկարս յօրինել և այն: որոց մնացորդք այժմ զարմանալիք թուին մեզ: Պարծիմք մեք այժմ ի վերայ գրականութեան մեծավատակ Հարցն մերոց: այլ առաւել ամաչեմք եւս, զի արդիւնական գործք նոցին՝ յանդիմանութիւն են մեզ յետնոցս եւ յայտնի վկայք յուլութեան մերոց:

Խակ դու, Հայր գրասէր և վաստակաւոր, զգարտս քո լիովին կատարեցիր առ Եկեղեցին Հայոց ընձեռելով զշամարաբառն Ա: Գրոց Նոր Սիօնի Մանկանց, որ խօսի կենգանի ձայնիւ և միշտ զքէն համարաբրուէ առ համայն Եկեղեցիս Հայոց:

իցէ արգեօք, զի նախանձելի օրինակիդ՝ նախանձաւոր լինիցի ոք ի մեծագործ աստուածանչը արանց ինոր տպագրութիւն Աստուածաշունչ Գրոց: Եւ գիտե՞ս զու թէ քանից լնատրելագոյն և հնագոյն գրչագիր օրինակը գտանին ի մատենագրաբանս վանուց Սուրբ Յակովեանց յօրուսաղէմ և ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Այլ զի կանինեցեր գու յայսմ արժանի ես Հայր, պատկեր զքո անուն և յիշատակ արձանագրելով ի ճակատ Համաբարբառին, զոր չկարեն եղծել դարք և ժամանակք:

Արժանի են նաեւ, զի ընդ քոյդ անուանի շարս՝ գրեսցին և կարգացին յիշատակք անուանց նոցա, որք զուգընթաց լինելով ընդ Մեկենասիդ բաժանորդակից լինել յօժարին, սատարելով ի մեծագոյն ծախս լայնածաւալ Գրոց Համաբարբառին:

Աւրեմն քաջալերեաց, Հայր, զի դու զմի պատուական յիշատակ եղեր ի Սիօն, որ յետ մեռանելոյդ՝ անմահութեանց կենդանի արձանագիրն է ։ Չիրմիդ տապանագքար՝ Աստուածաշունչ տառն է, գերեզմանիդ օր Հնիրդուք՝ Եկեղեցւոյ Մանկունքն են:

Եւ ես ասեմ զբանն և կնքեմ զիմ բան. Երանի, որ ունիցի յիշատակ ի Սիօն:

ԽՐԻՍΤԵԱՆ ՀԱՅՐԻԿ

1892 Օգոստոս 20  
Երբունիական

S E S O N I F T I V E

Ի ՎԵՐԱՑ

ՀԱՄԱԲՈՐԵԱՆԻ Ա. ԳՐՈՅ

Ի ՎԵՐԱՆՁԱՑ ժամանակաց աղդի ազ-  
դի Հնարս Հնարեցին սուրբ Հարք և աշակերտք բա-  
նին կենաց առ ի գիւրացուցանել զուսումն Ս. Գրոց  
և ի ջամբել մանկանց Եկեղեցւոյ զկամն երկնացին  
չնորհաց, նախ՝ առ ի չցոյէ տպագրական արուես-  
տի և գործեաց՝ մեծաւ ինամով և երկայնմտու-  
թեամբ ընդօրինակեալ բաղմացւցանեին զօրինակս  
նորա և սփռէին զնոսա ընդ ամենայն եկեղեցիս քը-  
րիստոնէից, Ապա ձեռն արկեալ թարգմանեին յայլ  
և յայլ բարբառս ի գիտութիւն և յօգուտ այլա-  
լեզու աղանց, և ի թարգմանութեանց յայցանէ  
չքնաղագոյն օրինակ վարկանելի է մերս հայկական  
թարգմանութիւն, որ ի ձեռն չնորհալի և աստուա-  
ծամերձ արանց կատարեցաւ, Յայս կարգէ են բաղ-  
մահատոր մեկնութիւն նախնեաց, որովք բացա-  
տրին գժուարիմաց բանք Գրոյն և գիւրանայ ըմ-  
րընումն նոցին, և այնու առաւել եւս արծարծի  
և սրաի ընթերցողին եռանգալից սէր ուսման նորին,

Զայս ամենայն առնեկն նախնիք նախ քան  
զգիւտ տպագրական արուեստին, յօրժամ ընդօրի-  
նակութիւն միոյ և եթ մատենի բազում ծախուք  
և անրաւ նեղութեամբ ի կատար հասանէր, Սմին  
իսկ իրի երկք նոցուն առաւել եւս գովելի և շա-  
հաւէա են քան զրազմացն ի նորագունից. քանզի  
նոքա ի ստիպմանէ պարագայից—թող զգերագոյն ո-  
գին և զջերագոյն հաւատս, որ ի նոսս տիրեր—  
բազում բազում անգամ վերծանէին և առաւել  
եւս ի խօս սրտից իւրեանց խելամուտ լինէին, այլ  
սուղ ինչ ի գիր արկանէին ի պէտս այլոց ժամանակ-  
ցած և առ յապա եկելոց, Խոկ գիւրութիւն գրչու-  
թեան և տպագրութեան այժմեան ժամանակիս ընդ  
բազում օգտաշատ և պատուական գրուածն ոչ սա-  
կաւ անպէտս և խոտանս ի հանդէս ածէ:

Ի վախճան խաւարեալ գարու պատութեան  
աշխարհի, յօրժամ վերստին սկսան ծաղկել գիտու-  
թիւնը և արուեստը, ծաղկեցաւ և աստուածարա-  
նական գիտութիւն, զոգեշնորհ երկս նախնի վար-  
դապետաց ի բաղմադարեան բանտարգելութենէ ցե-  
ցալից անկեանց զերծուցեալ ի լոյս ընծայեցին արք  
ուսումնականք և բանիբունք. և հիացեալ ի վերայ  
ճարտարութեան և իմաստութեան նախնի հեղինա-  
կացն՝ ինքեանք հետեւողք եղեն ոճոյ և ռեզու-  
թեան նոցին՝ յաւելլով զոր ինչ միանգամ ի յառա-  
ջադիմութենէ ժամանակին և ինքներոյս հանճարո-  
վին իւրեանց տեղեկացեալ էին, Զերրայական և  
զիելլենական սկզբանակուս ուսեւալ՝ հետազոտու-  
թեամբ քննէին զբանս Ս. Գրոց, յօրինէին մեկնու-  
թիւնս ի վերայ նոցա, կազմէին բառագիրս, քերա-  
կանութիւնս և այլ բազում հնարս ի նպաստ և ի  
սատարութիւն ուսման աստուածային Գրոյն:

Մին ի սատարիչ գիտութեանց յայցանէ է  
ՀԱՄԱԲՈՐԵԱՆԻ Ս. ՅՈՒՆԻ, յօրում ամիսովեալ գտանին նման  
բառագրոց ըստ կարգի ալիփարետաց՝ ամենայն բառք  
որք յԱստուածաշունչ Գիրս ի կիր արկեալ իցեն  
հանդերձ յիշատակութեամբ տեղւոյ և շարաբանու-  
թեան, յօրում գտանիցին բառքդ, Զիք ինչ տարա-  
կոյս զգիտանութենէ այսպիսի գործոյ, որ կարի իմն  
սատարէ ուսանողին եւ գիւրացուցանէ զուսումն  
աստուածատուր մատենին, Քանզի եթէ ընտիր ցանկը  
ի վերայ հասարակ աշխարհիկ կամ նուազ կարեւոր  
գրուածոց ունիցին զիւրեանց յարգ և պիտանու-  
թիւն, որբան առաւել պիտանի և օգտակար վարկա-  
նելի է այսպիսի ցանկ մի ի վերայ Ս. Մատենին որ  
գեր ի վերայ է քան զամենայն գովութիւն. զի նա է  
միմիայն կանոն հաւատոյ և կենցաղավարութեան  
մարդկան եւ առաջնորդ ի ճանապարհի յաւիտենա-  
կան կենաց ի ձեռն Միածնի Արդւոյն Աստուածոց Յի-  
սուսի Քրիստոսի.